

2022-2023 ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՔՆՆԱԿԱՆ ՆՍՈՒՇ

CONCOURS D'ENTREE 2022-2023/ EXEMPLE

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Իրավաբանական, կառավարման, մարքեթինգի, ֆինանսների ֆակուլտետներ

Facultés de Droit, gestion, marketing, finance

Temps imparti / Ժամանակը: 2.5 heures / 2.5 ժամ

Les dictionnaires ne sont pas autorisés. / Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)

1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավորով: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:

1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավորներով:

Առաջադրանք 2. (7 միավոր)

2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

2.2. առաջադրանքի համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

Առաջադրանք 3. (8 միավոր)

3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավորով:

Առաջադրանք 4. (8 միավոր)

4.1., 4.3 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով: 4.2. առաջադրանքը գնահատվում է 4 միավորով □ յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

Առաջադրանք 5. (6 միավոր)

5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավորով: 5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավորով:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

Առաջադրանք 1 (11 միավոր)

1.1. Անհրաժեշտության դեպքում գրել տառերը և կետադրել տեքստը (9 միավոր):

Լուսնի շառագույն սկավառակը երևաց Այծեմնասարի հետևից Գեղամա մթամա... ծովակն սկսեց լուսավորվել: Ճգնավորները օրվա բազմանվագ ժամասա...ությունից հոգնաբեկ փակվել էին տամուկ խցերի մեջ և հանգստանում էին: Միայն կղզու արևելյան կողմը բարձրացող գնբեթարդ բլրակի վրա լռել...այն անցուդարձ էր անում պարթևահասակ մի տղամարդ: Երևում է օտարական էր: Պարթև հասակը և սիգաճեմ քայլվածքը ցույց էին տալիս որ օտարականը վանական մթնոլորտին ան...նտել մարդ է:

Երկար անցուդարձ անելուց հոգնած նա նստեց բարձրավանդակի միջնաբերդ հիշեցնող լերկ ծայրին ուր ժայռերը ծովի ընդերքից ելնելով բարդ-բարդ կուտակվում էին միմ...նց վրա ու զորավոր ա...բարտակներ կազմելով շրջափակում կղզու արևելյան ու հարավային կողմերը:

Ապառաժի բարձունքին նստած անձանոթը ակ...նդետ նայում էր ծովակի այդ տեսարանին որ ակնապարար ու խաղաղավետ էր և մտածում Աստծո արարչագործության մասին: Նրան թվում էր հենց այդ վայրկյանին երբ բնությունը նիրհում է անդո... քնով ելնում են թաքստոցից չարության ոգիները կամ աշխարհ են իջնում հրեշտակները տնօրինելու տկար մահկանացուների վիճակը մեկին տալով բախտ ու երջանկություն մյուսին վիշտ ու տառապանք:

1.2. Նշել այն շարքը, որի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով (1 միավոր):

- 1) ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՅԻ, ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ՎՌԱՄՇԱՊՈՒՅ ԱՐՔԱ, ՄԵԾ ՀԱՅՔ
- 2) ՍԻՐԻԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ, ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ, ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ, ԼԱԶԱՐՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ
- 3) ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ, ՄՈՎՍԵՍ ՄԱՐԳԱՐԵ, ՓՈՔՐ ԱՍԻԱ
- 4) ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՅԻ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ, ԻՎԱՆ ԱՀԵՂ, ԾԱՂԿՈՒՆՅԱՑ ԼԵՌՆԱՇՂԹԱ

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են միասին (1 միավոր):

- 1) խոսքի (մասային), ափ (հանել), լույս (ընծայում), զին (դատախազ), տարեց (տարի)
- 2) խոտ (հարք), հազիվ (հազ), ուր (որ) է, առ (ձեռն), ձեռք (բերովի)
- 3) նոր (զվինեական), ժամ (առ) ժամ, տնե (տուն), տնից (տուն), երեք (հարկանի)
- 4) վեց (մետրանոց), նոր (խարբերոցի), ժամկետ (անց), ամսե (ամիս), ձեռք (սեղմում)

2. Առաջադրանք 2 (7 միավոր)

2.1. Դեմ դիմաց գրված բառերից համապատասխան արմատներ և ցանկացած ածանց ընտրելով (յուրաքանչյուր բաղադրիչ գործածել մեկ անգամ)՝ կազմել վեց բարդածանցավոր բառ (3 միավոր):

Ելակետ	արևածաղիկ	ք	-----
գիսաստղ	ակնդետ	որդ	-----
ճարտարապետ	ասուլիս	յան	-----
անցաբառ	սառցալեռ	ու	-----
ցանուցիր	խմորագունդ	արան	-----
ներարկիչ	հետախույզ	ան	-----

2.2. Ընդգծել ութ բառ, որոնցում տար հնչյունախումբը ածանց է (4 միավոր):

Տարբերակ, տարեդարձ, տարուբերել, տարկետում, տարտամորեն, տարանցիկ, տարեմուտ, տարախոհ, տարակուսանք, տարրաբանություն, տարածություն, տարերային, տարադրամ, տարեցտարի, տարափոփոխ, տարակարծություն:

Առաջադրանք 3 (8 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (3 միավոր): Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

Անակնկալ, խարդախ, հեծելագունդ, լռելյայն, անշշուկ, անկողմնակալ, հանկարծադեպ, արդարադատ, հավերժ, ստահակ, մշտնջենական, ասպախումբ:

3.2. Ընտրել և գրել հականիշների վեց զույգ (3 միավոր): Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

Չնչին, անջատ, նախատինք, լեփ-լեցուն, անքակտելի, փութկոտ, դրվատանք, աչառու, դանդաղկոտ, դատարկ, արդար, վիթխարի:

3.3. Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (2 միավոր):

- ա) վարկը զցել – անվանարկել, տունը քանդել – վնասել, ցանցը զցել – խաբել
- բ) խունկ ծխել – սգալ, քիթը կախ – տխուր, վերջ տալ – ավարտել
- գ) ցավոտ հարց – հրատապ հարց, սև կատու – գծտություն, ցավոտ տեղին դիպչել – հուզող խնդիր շոշափել
- դ) թևերը փռել – հովանավորել, ուժ տալ – գորացնել, սև գործ – ոճիր
- ե) մատը կծել – ցավեցնել, փեշի տակ առնել – սատարել, վերևից նայել – անտեսել
- զ) ուժից ընկնել – տկարանալ, սև թուղթ – մահագույժ, վատ սովորեցնել – շփացնել

Առաջադրանք 4 (10 միավոր)

4.1. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (2 միավոր):

ա) (Ավանդությունը, ավանդույթը) պատմում է, որ հին աշխարհում ապրում էին հսկաներ, որոնց նիզակները երեք մետրաչափ էին:

բ) Իր ողջ կյանքում այդ կինը (զուրկ, զերծ) է եղել ունեցվածքից և օրնիրուն աշխատել է՝ հոգալու իր ամենօրյա ծախսերը:

գ) Տանից հեռացած և (ասպնջական, աստանդական) դարձած որդին այդպես էլ հանգրվան չգտավ օտար ավերում:

դ) Աշխարհահռչակ գիտնականը (հրավեր, հրավերք) էր ստացել՝ դասախոսություն կարդալու այդ հանրահայտ բուհում:

4.2. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):

Հանուն քո, բացի նրանից, շտաբներ, մի՛ ջրի, իրեն հետ, սառող, ազդանիշներ, ի հակառակ սպասածի, երկրաշարժեր, մեզ վրայով, ձեզ պես, ի հոգուտ, նորից կրկնել, մի՛ նստի, հալեցրած, մեծացրեցի, անցկացրի, ինչի՞ միջոցով:

4.3. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասության մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր):

ա) Տատը երդվեց բոլոր ----- անուններով, որ ----- ուրվական-----
-----, և ----- նույնիսկ ճանաչել է այդ ուրվականին:

(ներս մտնել, լինել, ինքը, սուրբ)

Առաջադրանք 5 (6 միավոր)

5.1. Նշել այն նախադասությունները, որոնցում խնդրառության սխալ կա, և ուղղել սխալները (2 միավոր):

- ա) Նրա խոսքերը ոչ մի եզրով չէին առնչվում իմ պատկերացումներին:
- բ) Որդին պատրաստ էր ներում խնդրելու հորից, բայց հայրը խուսափում էր հանդիպումից:
- գ) Միայն այն ժամանակ կարող ես չհամաձայնել ուսուցչիդ կարծիքի հետ, երբ գիտության դուռը բացող նոր բանալի ես գտել:
- դ) Ի՞նչ է անսկիզբ ու անհանգրվան տևողությունը, որին ժամանակ անվանեց մարդը, և որն անուն կամ հորջորջում չէր ունենա առանց մարդ:

5.2. Նշել այն նախադասությունները, որոնցում համաձայնության սխալ կա, և ուղղել սխալները (2 միավոր):

- ա) Շքերթի մասնակիցներից ոմանք հետ մնացին խմբից:
- բ) Աշխատության վերջում տեղադրվել էին օգտագործված գրքերի և հապավումների ցանկերը:
- գ) Մորաքույրս իր երեխաների հետ հաճախ էին գալիս մեր տուն:

դ) Իմ դասախոսին՝ որպես փորձառու մասնագետ, հաճախ ենք դիմում դժվարին պահերին:

5.3. Նշել բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

Անցնում եմ Երևանի հարավային թաղամասերից մեկով, որ բռնեմ Արարատյան դաշտի ճանապարհը:

ա) Անցնում եմ Երևանի հարավային թաղամասերից մեկով՝ Արարատյան դաշտի ճանապարհը բռնելով:

բ) Անցնում եմ Երևանի թաղամասերից մեկով Արարատյան դաշտի հարավային ճանապարհը բռնելու համար:

գ) Անցնում եմ և Երևանի հարավային թաղամասերից մեկով Արարատյան դաշտի ճանապարհը բռնում:

դ) Անցնում եմ Երևանի հարավային թաղամասերից մեկով Արարատյան դաշտի ճանապարհը բռնելու համար:

5.4. Նշել ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելու ճիշտ տարբերակը (1 միավոր):

Ինձ մեկնեց ձեռքը՝ ասելով.

- Շատ հաճելի էր քեզ հետ հանդիպելը. ես ընդամենը մի քանի օրով եմ մեկնում արտասահման, չմոռանա՛ս, կզանգահարեմ ինձ:

ա) Ինձ մեկնեց ձեռքը՝ ասելով, որ շատ հաճելի էր իր հետ հանդիպելը. ինքն ընդամենը մի քանի օրով է մեկնում արտասահման, չմոռանամ, զանգահարեմ իրեն:

բ) Ինձ մեկնեց ձեռքը՝ ասելով, որ շատ հաճելի էր քեզ հետ հանդիպելը. ես ընդամենը մի քանի օրով եմ մեկնում արտասահման, չմոռանամ, կզանգահարեմ իրեն:

գ) Ինձ մեկնեց ձեռքը՝ ասելով, որ շատ հաճելի էր ինձ հետ հանդիպելը. ինքն ընդամենը մի քանի օրով է մեկնում արտասահման, չմոռանամ, զանգահարեմ իրեն:

դ) -Ինքն ընդամենը մի քանի օրով էր մեկնում արտասահման. չմոռանամ, զանգահարեմ իրեն,- ինձ մեկնեց ձեռքը՝ ասելով,- շատ հաճելի էր քեզ հետ հանդիպելը: